# ՀՖՖ ՖՈՒՏԶԱԼԻ ԳԱՎԱԹԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

2025թ., խմբագրություն

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**.....2
Հոդված 1.Կանոնակարգի առարկան, նպատակը և խնդիրները.....8
Հոդված 2.Մրցումների նպատակը և խնդիրները.....8
Հոդված 3.Մրցումների ղեկավարումը.....9
Հոդված 4.Մրցաշարի մասնակից թիմերը և հավաստագրերը.....9
Հոդված 5.Մրցաշարի անցկացման կարգը.....10
Հոդված 6.Սպասարկող անձնակազմ.....10
Հոդված 7.Խաղերի կազմակերպումը, ֆուտբոլիստների մասնակցությունը և փոխարինումը.....11
Հոդված 8.Խաղի արձանագրություն.....11
Հոդված 9.Մարզահագուստը.....11
Հոդված 10.Մրցաշարի խաղացանկը.....12
Հոդված 11.Ակումբների պատասխանատվությունը.....12
Հոդված 12.Մրցաշարի մասնակիցների գրանցումը և հայտավորումը.....13
Հոդված 13.Նախախաղային խորհրդակցությունը.....13
Հոդված 14.Չկայացած և անավարտ խաղերը.....13
Հոդված 15.Կարգապահական տույժեր.....14
Հոդված 16.Պարգևատրումը.....15
Հոդված 17.Թիմերի չներկայանալը խաղին կամ հրաժարվելը մրցաշարին.....15
Հոդված 18 .Այլ հարցեր.....16

# ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| | |
|---|---|
| **ՀՖՖ** | «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպություն |
| **ՖԻՖԱ** | Ֆուտբոլի միջազգային ասոցիացիաների ֆեդերացիա |
| **ՈՒԵՖԱ** | Ֆուտբոլի եվրոպական ասոցիացիաների միություն |
| **ԻՖԱԲ** | Ֆուտբոլի ասոցիացիաների միջազգային խորհուրդ |
| **ԱԽ** | ՀՖՖ Ֆուտզալի Առաջին խումբ |
| **Ակումբ** | Մարզական առումով ՀՖՖ-ի, ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի կանոնակարգերին նսահմանված կիրառելի և վերաբերելի նորմերին ենթարկվող ֆուտբոլային մարզական ակումբ (թիմ), որը մասնակցում է կամ ցանկանում է մասնակցել ՀՖՖ-ի հովանու ներքո անցկացվող ֆուտբոլային մրցումներին |
| **Ակումբի պաշտոնյա** | Ակումբի աշխատակից, բացառությամբ ֆուտբոլիստների և թիմի անձնակազմի անդամների, ով ֆուտբոլային ակումբի հետ գտնվում է աշխատանքային հարաբերությունների մեջ և/կամ ներառված է ակումբի իրավական խմբի կառուցվածքում և/կամ գրանցված է ՀՖՖ Ֆուտբոլի կառավարման համակարգում՝ որպես ակումբի պաշտոնյա |
| **Առաջնություն** | Տվյալ մրցաշրջանի պրոֆեսիոնալ ֆուտզալի ԱԽ ակումբների միջև անցկացվող ՀՀ առաջնություն |
| **Արտակարգ իրավիճակ/ Ֆորս-մաժոր** | Ֆորս մաժոր՝ արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ, որոնք առաջացել են հանդիպման մասնակցի և կազմակերպչի կամքից անկախ, ներառյալ (սակայն չսահմանափակվելով դրանցով) բնական և տեխնածին աղետները, բնության ուժերի արտասովոր դրսևորումները (այդ թվում՝ |

| | |
|---|---|
| | ջրհեղեղներ, երկրաշարժեր, փոթորիկներ, պտտահողմեր, կայծակով և ամպրոպով ուղղորդվող հորդառատ անձրևներ, ձնաբքեր, սողանքներ), համաճարակները, հասարակական անկարգությունները, ահաբեկչությունները, պատերազմները, ապստամբությունները, գործադուլները, որոնք խոչընդոտում են ֆուտբոլային հանդիպման՝ պատշաճ և ըստ նախատեսվածի կազմակերպմանը և/կամ անցկացմանը |
| **ԱԽ Հովանավոր (գործընկեր)** | ՀՖՖ-ի հետ ԱԽ-ին վերաբերող հովանավորչական (գործընկերական) պայմանագիր ստորագրած իրավաբանական անձ |
| **Դոպինգ ստուգում** | Վիճակահանության արդյունքում ընտրված առաջնության մասնակից խաղացողներին և ակումբներին իրազեկում՝ վիճակահանությամբ ընտրված խաղացողների մասին, տվյալ խաղացողներից կենսաբանական նմուշների ստացում և դրանց հետագա հետազոտություն՝ ֆուտբոլիստների օրգանիզմում խթանիչ և/կամ այլ արգելված միջոցների առկայության ստուգման համար, ինչն ուղեկցվում է համապատասխան փաստաթղթերի ստորագրմամբ |
| **Թիմի անձնակազմ** | Ակումբի աշխատակիցներ, այդ թվում՝ մարզչական, տեխնիկական և ղեկավար անձնակազմի անդամներ, ովքեր հայտավորված են՝ ՀՖՖ-ի պրոֆեսիոնալ մրցումներին մասնակցելու նպատակով |
| **Խաղացանկ** | Խաղային օրերի ժամանակացույց |
| **Խաղաշրջան** | Ֆուտբոլային տարվա կտրվածքով առաջին պաշտոնական խաղով մեկնարկող և վերջին պաշտոնական խաղով ավարտվող ժամանակաշրջան |
| **Խաղի ժամանակահատված** | Խաղասկզբից 2 ժամ առաջ, խաղի ժամանակ, ընդմիջմանը և խաղից 1 ժամ հետո ընկած ժամանակահատված |

| | |
|---|---|
| **Խաղի կանոններ** | «Ֆուտզալ խաղի» գործող կանոններ՝ ըստ ԻՖԱԲ-ի գործող կանոնների |
| **Կանոնակարգ** | ՀՖՖ Ֆուտզալի Առաջին խմբի մրցումների անցկացման կանոնակարգ (2024-2025 մրցաշրջան) |
| **Հանդիպման (խաղի) մասնակից** | Ֆուտբոլիստ, թիմի անձնակազմ, ֆուտբոլային հանդիպումը սպասարկող անձնակազմ և հանձնակատար |
| **Հայաստանի ազգային/տարբեր տարիքային հավաքականների անդամ** | Ֆուտբոլիստներ, որոնք ստացել են պաշտոնական հրավեր և մասնակցել են ազգային/տարբեր տարիքային հավաքականների հավաքներին և/կամ խաղերին |
| **Հեռարձակում** | Ֆուտբոլային հանդիպման՝ մարզադաշտից տեսանկարահանման և եթերի տրամադրման, ինչպես նաև համացանցի միջոցով ուղիղ եթերի հեռարձակման ապահովում |
| **ՀՖՖ Գործադիր կոմիտե** | ՀՖՖ-ի կանոնադրությամբ նախատեսված կոլեգիալ կառավարման մարմին |
| **ՀՖՖ Մրցավարական և տեսչական դեպարտամենտ** | Հանդիպման մրցավարներին և տեսուչին նշանակող մարմին |
| **ՀՖՖ նույնականացման քարտի համար (ID)** | Ֆուտբոլային օբյեկտների և սուբյեկտների անհատական համար, որը տրվում է Ֆուտբոլի կառավարման համակարգում գրանցվելիս |
| **ՀՖՖ Ֆուտզալի բաժին** | Ֆուտզալի մրցումները կազմակերպող և անցկացնող մարմին |
| **Մարզադահլիճ** | ՀՖՖ–ի կողմից ընդունված մարզչական շինություն, որտեղ անցկացվում է ֆուտզալի հանդիպումը: |
| **Մրցաշրջան** | Ժամանակաշրջան, որը մեկնարկում է օրացուցային տվյալ տարվա հուլիսի 1-ին և ավարտվում հաջորդ տարվա հունիսի 30-ին |
| **Սպասարկող անձնակազմ** | Մրցավար, երկրորդ մրցավար, երրորդ մրցավար, ժամանակաչափորդ, տեսուչ |

| | |
|---|---|
| **Մրցավար** | Խաղի ՀՖՖ-ի կողմից նշանակված մրցավար |
| **2-րդ մրցավար** | ՀՖՖ-ի կողմից նշանակված հանդիպման 2-րդ մրցավար |
| **Մրցավարի օգնական** | ՀՖՖ-ի կողմից նշանակված հանդիպման մրցավարների օգնականներ (երրորդ մրցավար և ժամանակաչափորդ) |
| **Մրցումներ** | ՀՖՖ հովանու ներքո անցկացվող մրցաշարեր՝ Ֆուտզալի Հայաստանի Բարձրագույն խմբի առաջնություն, Առաջին խմբի առաջնություն, ՖուտզալիՀայաստանի Գավաթ, Ֆուտզալի Հայաստանի Սուպերգավաթ |
| **Պաշտոնական խաղեր** | Կազմակերպված ֆուտզալի շրջանակներում անցկացվող խաղեր՝ ազգային առաջնությունների, գավաթի խաղարկության, միջազգային ակումբային մրցաշարերի հանդիպումներ |
| **Ֆուտբոլիստ/Ֆուտզալիստ (խաղացող)** | Անձ, ով հայտավորված է տվյալ առաջնությանը մասնակցության նպատակով |
| **Տեսուչ** | ՀՖՖ Մրցավարի, 2-րդ մրցավարի, 3-րդ մրցավարի, ժամանկաչափորդի գործողությունները գնահատող ՀՖՖ-ի ներկայացուցիչ |
| **Ֆուտբոլի կառավարման համակարգ (FMS)** | Էլեկտրոնային տեղեկատվական համակարգ, որը հնարավորություն է տալիս կատարել բոլոր գործառույթները, որոնք ընդգրկում են ֆուտբոլային ենթակառուցվածքների, ֆուտբոլային ակումբների, ֆուտբոլիստների, մրցումների կազմակերպման և անցկացման, նախախաղային և Հետխաղային տվյալների կառավարումը |
| **Ֆուտբոլային սուբյեկտներ** | Պրոֆեսիոնալ ֆուտզալում ներգրավված իրավաբանական և ֆիզիկական անձինք |

| | |
|---|---|
| **Ֆուտզալ** | Ֆուտբոլ մարզաձև, որը պետք է խաղալ համաձայն ԻՖԱԲ «Ֆուտզալ խաղի» կանոնների՝ թողարկված ՖԻՖԱ-ի և միջազգային ֆուտբոլային ասոցիացիաների խորհրդի ենթակոմիտեի համատեղ գործունեությամբ: |

## Հոդված 1.Կանոնակարգի առարկան, նպատակը և խնդիրները

1.01. Սույն կանոնակարգը սահմանում է ՀՖՖ-ի հովանու ներքո անցկացվող ֆուտզալի Հայաստանի գավաթի խաղարկության կազմակերպման և անցկացման սկզբունքները, ֆուտբոլային սուբյեկտների իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը և այլ ընթացակարգային հարցերը տվյալ մրցումների ընթացքում, կարգավորում է ՀՖՖ-ն:

1.02. Կանոնակարգի խնդիրներն են՝

ա) Ֆուտզալի Հայաստանի գավաթի խաղարկության կազմակերպման, անցկացման, ղեկավարման և հսկողությանընթացակարգերի սահմանումը,
բ) Մասնակիցների համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը և ապահովումը,

## Հոդված 2.Մրցումների նպատակը և խնդիրները

2.01. Մրցումների նպատակն է՝

ա) ՀՀ տարածքում ֆուտզալի հետագա զարգացմանը նպաստելը,

բ) ֆուտբոլիստների վարպետության մակարդակի բարձրացմանը նպաստելը,

գ) «Արդար խաղի» սկզբունքների արմատավորմանը և կենսագործմանը նպաստելը,

թ) Դասակարգել մասնակից թիմերն՝ ըստ մրցաշարի արդյունքների,

ժ) Ի հայտ բերել մրցաշարի մրցանակակիրներին,

ի) Ստեղծել հարթակ սիրողական թիմերի համար՝ հետագայում պրոֆեսիոնալ գործունեություն ծավալելու համար:

2.02. Մրցումների խնդիրներն են՝

ա) Գավաթի խաղարկության թիմերի դասակարգումն ըստ արդյունքների,

բ) Մրցաշրջանի մրցանակակիրների որոշումը հետևյալ դասակարգմամբ՝

- Գավաթի խաղարկության լավագույն ֆուտբոլիստ,
- Գավաթի խաղարկության լավագույն դարպասապահ,
- Գավաթի խաղարկության լավագույն մարզիչ,
- Հնարավոր է այլ մրցանակներ ՀՖՖ-ի կողմից:

## Հոդված 3.Մրցումների ղեկավարումը

Առաջնության կազմակերպումն ու վերահսկումն իրականացվում է ՀՖՖ-ի կողմից.

- հաստատում է մրցումների անցկացման կանոնակարգը և խաղացանկը,
- իրականացնում է թիմերի գրանցման և հայտավորման ընթացակարգը,
- կազմակերպում է խաղերը և իրականացնում դրանց հսկողությունը,
- ամփոփում է հանդիպումների արդյունքները,
- հաստատում է գավաթի խաղարկության արդյունքները և իրականացնում մրցանակակիրների պարգևատրումը,
- հաստատում է մրցումները սպասարկող մրցավարների և տեսուչների կազմը,
- կազմակերպում և տնօրինում է խաղերի հեռարձակումը,
- իրականացնում է սույն կանոնակարգով նախատեսված դեպքերում և կարգով հանդիպումների հետաձգումը (դրանց անցկացման ամսաթվի, մեկնարկի ժամի և վայրի փոփոխություն),
- իրականացնում է վերահսկողություն կիրառելի և վերաբերելի կանոնակարգի շրջանակներում,
- տրամադրում է թիմերի և մրցավարների համար նախատեսված հանդերձարաններ,
- տրամադրում է սպասարկող մրցավարական անձնակազմի համար ջուր,
- ապահովում է բժշկի և անվտանգության աշխատակիցների, կարգադրիչների ներկայությունը և վերջիններիս աշխատանքային պարտականությունների կատարումը,
- իրականացնում է կանոնակարգի պահանջներից բխող այլ գործառույթներ:

## Հոդված 4.Մրցաշարի մասնակից թիմերը և հավաստագրերը

Ֆուտզալի Հայաստանի գավաթի խաղարկությանը մասնակցում են ՀՀ Ֆուտզալի Բարձրագույն խմբի առաջնության մասնակից՝ 8, ՀՀ Ֆուտզալի Առաջին խմբի առաջնության՝ 12 և սիրողական 8 ակումբներ, որոնք ընդունում և պարտավորվում են կատարել սույն կանոնակարգի պահանջները:

## Հոդված 5.Մրցաշարի անցկացման կարգը

1. Սույն կանոնակարգով սահմանված ֆուտզալի Հայաստանի գավաթի շրջանակներում հանդիպումներն անցկացվում են՝ համաձայն ԻՖԱԲ «Ֆուտզալ խաղի» կանոնների և սույն կանոնակարգի դրույթների:
2. Ֆուտզալի Հայաստանի գավաթի 2025թ. խաղարկությունն անցկացվում է օլիմպիական մրցակարգով:
3. Ֆուտզալի Հայաստանի գավաթի խաղարկությունը անցկացվում է 28 թիմով:
4. ՀՀ Ֆուտզալի Բարձրագույն խմբի առաջնության մասնակից թիմերը մրցապայքարը սկսում են 1/8 եզրափակիչ փուլից: ՀՀ Ֆուտզալի առաջին խմբի առաջնության մասնակից թիմերը՝ 1/16 եզրափակիչ փուլից : Մնացած 8 սիրողական թիմերը մրցապայքարը սկսում են նախնական փուլից:
5. Ֆուտզալի Հայաստանի գավաթի խաղարկության հանդիպումները անցկացվում են մեկ խաղով:
6. Խաղը բաղկացած է 20 րոպե մաքուր խաղաժամանակով 2 խաղակեսից և խաղակեսերի միջև ընկած մինչև 10 րոպե ընդմիջումից՝ ըստ ԻՖԱԲ «Ֆուտզալ խաղի կանոններ»- ի:
7. Ֆուտզալի Հայաստանի գավաթի խաղարկության մասնակից թիմերի դիրքերը խաղացանցկի բոլոր փուլերում որոշվում է կույր վիճակահանությամբ:
8. Ֆուտզալի Հայաստանի գավաթի խաղարկության հանդիպումներն անցկացվում են 2025թ. մարտ ամսից մինչև 2025թ մայիս ամիսն ընկած ժամանակահատվածում:

9. Խաղի հիմնական ժամանակի ավարտին հավասարության դեպքում նշանակվում է 6 մետրանոց հարվածաշար (առանց լրացուցիչ ժամանակի)՝ ֆուտզալ խաղի կանոնների համաձայն:

10. 1/8 եզրափակչից սկսած խաղի հիմնական ժամանակի ավարտին հավասարության դեպքում թիմերը կխաղան լրացուցիչ ժամանակ 5+5 րոպե ՝ ֆուտզալ խաղի կանոնների համաձայն:

## Հոդված 6.Սպասարկող անձնակազմ

1. Խաղերը կազմակերպելու և վարելու համար ՀՖՖ Մրցավարական և տեսչական բաժինը նշանակում է սպասարկող խումբը՝ մրցավար, 2-րդ մրցավար, 3-րդ մրցավար, ժամանակաչափորդ և որոշ դեպքերում տեսուչ:
2. Ակումբների կամ այլ կազմակերպությունների պահանջով կամ խնդրանքով սպասարկող անձնակազմի կամ վերջինիս առանձին անդամների նշանակում կամ փոխարինում չի կատարվում:
3. Մրցավարների և տեսուչների իրավունքները և պարտականությունները սահմանվում են ԻՖԱԲ «Ֆուտզալ խաղի» կանոնների, սույն Կանոնակարգի դրույթների և մրցավարությունն ու տեսչությունը կանոնակարգող՝ ՀՖՖ-ի այլ փաստաթղթերի համաձայն:

## Հոդված 7.Խաղերի կազմակերպումը, ֆուտբոլիստների մասնակցությունը և փոխարինումը

1. Յուրաքանչյուր խաղից 10 րոպե առաջ հանդիպման մրցավարի ղեկավարությամբ անցկացվում է նախախաղային խորհրդակցություն՝ խաղադաշտում, որին մասնակցում են հանդիպումը սպասարկող մրցավարները, թիմերի ֆուտբոլիստները և պաշտոնյաները:
2. Թիմերի ներկայացուցիչները պարտավոր են խաղի մեկնարկից առավելագույնը 1 ժամ առաջ խաղի մեքենագրված ու ստորագրված արձանագրությունը առձեռն հանձնել խաղի մրցավարներին: Խաղի արձանագրությունում լրացվում են մինչև 14 ֆուտբոլիստի և 5 պաշտոնյայի տվյալներ: Խաղի արձանագրությունում նշվում են միայն այն ֆուտբոլիսների և պաշտոնյաների տվյալները, որոնք գրանցված և հայտավորված են տվյալ թիմում և որակազրկված չեն:
3. Խաղին կարող են մասնակցել և տեխնիկական գոտում գտնվել միայն տվյալ խաղի արձանագրությունում նշված ֆուտբոլիստները և պաշտոնյաները:
4. Չհայտավորված, որակազրկված, արձանագրությունում չնշված ֆուտբոլիստի խաղին մասնակից դառնալու դեպքում տվյալ թիմին գրանցում է տեխնիկական պարտություն՝ 0:5 հաշվով:

## Հոդված 8.Խաղի արձանագրություն

1. Յուրաքանչյուր խաղ պետք է ունենա արձանագրություն:
2. Արձանագրության մեջ կարող են նշվել միայն այն ֆուտբոլիստները և թիմերի անձնակազմի անդամները, ովքեր հայտավորված են և որակազրկված չեն տվյալ խաղին մասնակցելու համար: Չհայտավորված և որակազրկված ֆուտբոլիստների խաղին մասնակցության պատասխանատվությունը կրում է տվյալ ակումբը:

## Հոդված 9.Մարզահագուստը

1. Առաջնությունների մասնակից ակումբները խաղաշրջանի մեկնարկից նվազագույնը 2 օր առաջ հաստատում և ՀՖՖ են ներկայացնում իրենց տնային, արտագնա և, առկայության դեպքում, պահեստային մարզահագուստները: Ակումբների խաղերին իրավունք ունեն մասնակցելու միայն ՀՖՖ-ի կողմից վերջնական հաստատված մարզահագուստով:
2. Ֆուտբոլիստների մարզահագուստը պետք է համապատասխանի «ֆուտզալ խաղի կանոնների» պահանջներին:
3. Ֆուտբոլիստների մարզաշապիկների հետնամասում պետք է պարտադիր առկա լինեն խաղային համարները, բացառությամբ 5-րդ խաղացողի մարզաշապիկի որը կարող է լինել առանց համար, կամ համարի հատվածը լինի կտրված:
4. 5-րդ խաղացողի մարզաշապիկը պետք է լինի հիմնական դարպասապահի մարզաշապիկի գույն:

րցող թիմերի մարզահագուստների գույները հաստատվում են մրցավարի կողմից՝ նախախաղային խորհրդակցության ժամանակ: Գույների համընկման դեպքում մարզահագուստը փոխում է հյուրընկալվող թիմը:

6. Մարզահագուստի վրա թույլատրվում է տեղադրել գովազդ, որը չի պարունակում քաղաքական, ռասսայական, կրոնական տարրեր և/կամ այլ կերպ չի խախտում գովազդի մասին ՀՀ օրենսդրության պահանջները (հիշյալ դեպքերում ողջ պատասխանատվությունը կրում է Ակումբը):
7. Ֆուտբոլիստներին արգելվում է խաղի ժամանակ կրել ցանկացած տեսակի զարդեղեն:

## Հոդված 10.Մրցաշարի խաղացանկը

1. Ֆուտզալի Հայաստանի գավաթի խաղարկության խաղացանկը ներկայացվում է թիմերին մրցումների սկզբից ոչ ուշ քան 3 օր առաջ:
2. Խաղացանկի հաստատված խաղերը ենթակա չեն փոփոխման:
3. Մրցափուլերի օրերի հիման վրա ՀՖՖ-ն, խաղաշրջանի մեկնարկից առնվազն 5 օր առաջ նշանակում է առաջին մրցափուլի խաղերի օրերը և ժամերը, այնուհետև՝ հաջորդող բոլոր մրցափուլերի մեկնարկից առնվազն 3 օր առաջ՝ այդ մրցափուլերի խաղերի օրերը և ժամերը, ինչի վերաբերյալ տեղեկատվությունը շրջաբերականով ուղարկվում է մասնակից ակումբների պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեի միջոցով:

## Հոդված 11.Ակումբների պատասխանատվությունը

1. Ակումբները պատասխանատու են իրենց ֆուտբոլիստների և անձնակազմի գործողությունների համար:
2. Խաղի արձանագրությունում նշված ֆուտբոլիստների և թիմի անձնակազմի՝ խաղին մասնակցելու իրավասության առկայության համար (խաղի արձանագրությունում նշված լինելը համարվում է խաղին մասնակցություն),
3. Ակումբները պատասխանատու են ՀՖՖ-ին ոչ հավաստի տեղեկություն պաշտոնապես ներկայացնելու համար:
4. Ակումբները պարտավոր են վարել ֆուտբոլիստների ստացած դեղին քարտերի հաշվառումը ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի համապատասխան հոդվածի կետերով նախատեսված խախտումներ հայտնաբերելու դեպքերում՝ կիրառել այդ Կանոնակարգով նախատեսված պատժամիջոցները՝ առանց ՀՖՖ-ի Կարգապահական և Էթիկայի կոմիտեի որոշման:

5. Ակումբներին արգելվում է՝

ա) միջամտել խաղը սպասարկող անձնակազմի գործողություններին, այն է՝ կատարել այնպիսի գործողություն կամ անգործություն, որը խոչընդոտում է կամ

կարող է խոչընդոտել խաղը սպասարկող անձնակազմի բնականոն գործունեությանը կամ կարող է ազդել խաղի ընթացքի կամ ելքի վրա,

## Հոդված 12.Մրցաշարի մասնակիցների գրանցումը և հայտավորումը

1. Ակումբները պետք է ֆուտբոլիստներին և անձնակազմի անդամներին հայտավորեն Ֆուտբոլի կառավարման համակարգի (FMS) միջոցով:
2. Թիմերում հայտավորվել կարող են միայն այն ֆուտբոլիստները, ովքեր գրանցված են տվյալ ակումբում:
3. Թույլատրվում է հայտավորել մինչև 5 պաշտոնյա և մինչև 20 ֆուտբոլիստ:
4. Յուրաքանչյուր թիմում պետք է հայտավորված լինեն նվազագույնը 1 պաշտոնյա և 8 ֆուտբոլիստ:
5. Մասնակից թիմերի հայտավորման ժամկետը սկսում է 20.01.2025թ. և ավարտվում 14.02.2025թ.-ին:
6. Հայտավորման ժամկետներից հետո ֆուտբոլիստների վերահայտավորում տեղի չի ունենում:
7. Ակումբների պաշտոնյաները վերահայտավորվում են առանց ժամկետային սահմանափակումների:

## Հոդված 13.Նախախաղային խորհրդակցությունը

1. Ակումբների կողմից նախախաղային խորհրդակցությանը մասնակցող անձինք մրցավարի ստուգմանն են ներկայացնում ֆուտբոլիստների և դարպասապահի խաղային մարզահագուստն ամբողջությամբ՝ մարզաշապիկ, կիսավարտիք (կամ սպորտային տաբատ՝ դարպասապահի դեպքում), կիսագուլպա, մարզումային ժիլետները: Հիմնական հանդերձանքից բացի պետք է ներկայացվեն նաև պաշտպանիչ դիմակներ, պաշտպանիչ գլխարկներ, գունավոր էլաստիկժապավեններ, եթե դրանք օգտագործվելու են:

## Հոդված 14.Չկայացած և անավարտ խաղերը

1. Անավարտ կամ չկայացած են համարվում այն խաղերը, որոնք ընդհատվել և չեն շարունակվելկամ չեն կայացել հետևյալ պատճառներով՝

   ա) արտակարգ իրավիճակների,

Բ

) լուսավորման համակարգի խափանման (անջատում), որը հնարավոր չի եղել վերականգնել 30 րոպեի ընթացքում,
գ) թիմ/եր/ի մարզադահլիճը լքելու,
դ) երրորդ անձանց միջամտության դեպքում,
ե) խաղի մասնակիցների անվայել վարքագծի,
զ) մեկ կամ երկու թիմերի ֆուտբոլիստների, պաշտոնյաների և/կամ երկրպագուների անկարգապահ վարքագծի դեպքում,
է) հասարակական կարգի խախտման, որն ազդել է խաղի ընթացքի և արդյունքի վրա,
ը) թիմի կազմում 3-ից պակաս ֆուտբոլիստների առկայության դեպքում,
թ) այլ սուբյեկտիվ հանգամանքների առկայության պարագայում:

2. Եթե խաղը չի կայացել կամ ընդհատվել է անկախ Ակումբների կամ նրանց պատասխանատվության տակ գտնվող անձանց կամքից, ապա այն վերախաղարկվում կամ ընդհատման պահից շարունակվում է մեկ այլ օր: Տվյալ խաղի խաղացված մասի հաշիվը, կարգապահական տույժերը մնում են ուժի մեջ (պահպանվում են): Խաղի շարունակությանը իրավունք ունեն մասնակցելու միայն խաղի արձանագրությունում նշված և խաղին մասնակցած ֆուտբոլիստները: Խաղի վերախաղարկման կամ անցկացման /շարունակման/ ժամկետի վերաբերյալ որոշում կայացնելու իրավունքը պատկանում է ՀՖՖ-ին:

3. Սույն հոդվածի մյուս բոլոր կետերով ամրագրված դեպքերում խաղն ընդհատվելու կամ չկայանալու պարագայում արդյունքը չեղյալ է համարվում: Մեղավոր թիմին գրանցվում է տեխնիկական պարտություն 0-5 հաշվով, իսկ մրցակցին՝ հաղթանակ 5-0 հաշվով: Եթե խաղն ընդհատվել կամ չի կայացել երկու թիմերի մեղավորության կամ դիտավորության պատճառով, ապա երկու թիմերին գրանցվում է տեխնիկական պարտություն 0-5 հաշվով:

4. Սույն հոդվածում նկարագրված դեպքերում գրանցված գոլերը ռմբարկուների հաշվարկում չեն ներառվում, բացառությամբ այն դեպքերի, երբ մրցակցի առավելությունը ավելին է քան 5 գնդակը: Կարգապահական տույժերը մնում են ուժի մեջ:

5. Սույն հոդվածի 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված պատիժները և հետևանքները վերաբերումեն նաև այն դեպքերին, երբ թիմերից մեկին որևէ խախտման համար տրվել է տեխնիկական պարտություն:

## Հոդված 15.Կարգապահական տույժեր

1. Նույն խաղում 2 զգուշացում ստանալով ֆուտբոլիստը հեռացվում է խաղադաշտից, և որակազրկվում է 1 խաղով:
2. Նույն խաղում 2 զգուշացում ստանալով պաշտոնյան հեռացվում է խաղադաշտից, և որակազրկվում է 1 խաղով:
3. Խաղի ժամանակ մրցավարի կողմից հեռացվելու դեպքում (կարմիր քարտ) ֆուտբոլիստը/պաշտոնյան որակազրկվում է 1 խաղով:

թե խաղի ժամանակ ֆուտբոլիստը/պաշտոնյան հեռացվել է ոչ սպորտային պահվածքի համար, որակազրկման խաղերի քանակը որոշում է ՀՖՖ Կարգապահական և Էթիկայի կոմիտեն:

5. Ֆուտբոլիստը կամ պաշտոնյան գավաթի խաղարկության ընթացքում 2-րդ զգուշացումը (դեղին քարտը) ստանալու դեպքում բաց է թողնում հաջորդ փուլի հանդիպումը, բացառությամբ եզրափակչի: Եզրափակչից առաջ ստացած դեղին քարտերը չեղյալ են համարվում (բացառությամբ նույն խաղի ժամանակ ստացած 2 զգուշացման դեպքերի):
6. Ֆուտզալի Հայաստանի 2025 թվականի Գավաթի խաղարկության ընթացքում ստացած դեղին և կարմիր քարտերը (բացառությամբ ԿԷԿ որոշումների) չեն ազդում այլ մրցաշարերի վրա և հակառակը:

## Հոդված 16.Պարգևատրումը

1. Ֆուտզալի Հայաստանի գավաթի խաղարկության հաղթողի և մրցանակակիրների պարգևատրումն իրականացնում է Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիան:
2. Հաղթող /ակումբին/ թիմին շնորհվում է 2025թ. Ֆուտզալի Հայաստանի Գավաթի խաղարկության հաղթողի կոչումը: Ակումբը պարգևատրվում է ոսկե մեդալով և ՀՖՖ դիպլոմով: Ակումբին է հանձնվում փոխանցիկ գավաթ:
3. Լավագույն արդյունք գրանցած սիրողական թիմը կնվաճի ՀՀ Ֆուտզալի Առաջին խմբի գալիք առաջնության ուղեգիր, անվճար:
4. Փոխանցիկ գավաթը հանձնվում է առ ժամանակ հաղթող ակումբին, բայց հանդի-սանում է ՀՖՖ-ի սեփականությունը: Հաղթող ակումբը պատասխանատու է փոխան ցիկ գավաթի համար և պարտավոր է այն ՀՖՖ-ին վերադարձնել գավաթի հաջորդ խաղարկության մեկնարկից 10 օր առաջ, պատշաճ վիճակում: Գավաթի կորստի կամ վնասման դեպքում ակումբը պարտավոր է վճարել գավաթի արժեքի հնգապատիկը:

## Հոդված 17.Թիմերի չներկայանալը խաղին կամ հրաժարվելը մրցաշարին

1. Անհարգելի պատճառով խաղին չներկայանալու, դեպքում մեղավոր թիմին գրանցվում է տեխնիկական պարտություն 0:5 հաշվով, իսկ մրցակից թիմին՝ հաղթանակ 5:0 հաշվով:
2. Թիմը համարվում է խաղին չներկայացած, եթե չի տեղեկացրել ուշացման պատճառների մասին խաղից նվազագույնը 2 ժամ առաջ և խաղասկզբին չի ներկայացել:
   Տեղեկացնելու դեպքում խաղասկիզբը կարող է հետաձգվել ոչ ավելի, քան 15 րոպեով:

## Հոդված 18 .Այլ հարցեր

1. Մրցաշարի ընթացքում բժշկական անձնակազմի ապահովումը իրականացնում է ՀՖՖ-ն:
2. Գավաթի խաղարկության բոլոր հանդիպումները անցկացվելու են մրցաշարի պաշտոնական գնդակով, որը տրամադրելու է ՀՖՖ-ն: Այլ գնդակով հհանդիպումների անցկացումը արգելվում է:

3. Սույն կանոնակարգի դրույթների խախտումների (չկատարման) համար կիրառվում ենպատժամիջոցներ:

4. Սույն կանոնակարգը ուժի մեջ է մտնում հաստատման պահից և գործում է մինչև մրցաշարիավարտը:

5. Ֆուտզալի Հայաստանի գավաթի 2025թ. խաղարկության բոլոր խաղերը տեղի են ունենում ՀՖՖ Տեխնիկական կենտրոն/Ֆուտբոլի ակադեմիայի մարզադահլիճում: ՀՖՖ-ի որոշմամբ առաջնության խաղերը կարող են տեղափոխվել այլ մարզադահլիճ:

6. Սույն կանոնակարգի դրույթների խախտումների (չկատարման) համար կիրառվում ենպատժամիջոցներ:

7. Սույն կանոնակարգը ուժի մեջ է մտնում հաստատման պահից և գործում է մինչև մրցաշարիավարտը:

| | |
|---|---|
| ***ՀՖՖ ՖՈՒՏԶԱԼԻ ԳԱՎԱԹԻ ԽԱՂԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ (2025 )*** | |
| *Հաստատված է՝ ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտի կողմից . 01/04/2025թ* | *Ուժի մեջ է մտնում 01/04/2025թ* |

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԿ
ՖՈՒՏԶԱԼԻ ԲԱԺԻՆ
ԽԱՆՋՅԱՆ ՓՈՂՈՑ 27
ԵՐԵՎԱՆ, 0010, ՀԱՅԱՍՏԱՆ
Հեռ. +374 10 30 50 50
Էլ. փոստ. FUTSAL@FFA.AM
www.ffa.am